

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

*ՄՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
2009Թ. ՀՈՒՆՎԱՐ-ՆՈՅԵՄԲԵՐԻՆ*

ԹԻՎ 11

Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2009թ. հունվար-նոյեմբերին

%

	2009թ.										
	հուն-վարը	փետր-վարը	մարտը	ապրիլը	մայիսը	հունիսը	հուլիսը	օգոստոսը	սեպտեմբերը	հոկտեմբերը	նոյեմբերը
	<i>նախորդ ամսվա նկատմամբ</i>										
Սպառողական գների ինդեքս-ընդամենը	101.2	98.2	101.4	103.2	101.6	99.7	97.3	99.6	100.7	100.5	101.2
<i>այդ թվում՝</i>											
Սպառման ապրանքներ	101.6	97.5	101.5	102.1	102.2	99.3	96.1	99.0	100.5	100.6	101.7
Պարենային ապրանքներ	102.6	96.7	101.0	102.1	102.4	98.5	94.3	98.5	100.2	100.6	102.0
Ոգելից խմիչք, ծխախոտ	100.0	100.4	100.7	100.4	100.1	100.0	99.9	99.9	100.0	100.0	100.0
Ոչ պարենային ապրանքներ	98.7	99.1	103.6	102.8	102.6	102.0	100.5	100.3	101.2	100.5	101.4
Ծառայություններ	100.3	99.8	101.0	105.6	100.2	100.4	100.1	100.8	101.2	100.5	100.1

%

	2009թ.			
	<i>նոյեմբերը</i>			հունվար-նոյեմբերը 2008թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ
	2008թ. դեկտեմբերի նկատմամբ	2008թ. նոյեմբերի նկատմամբ	2005թ. նկատմամբ	
Սպառողական գների ինդեքս-ընդամենը	104.5	104.6	123.4	103.1
<i>այդ թվում՝</i>				
Սպառման ապրանքներ	101.9	102.0	118.8	100.1
Պարենային ապրանքներ	98.7	99.5	120.7	98.8
Ոգելից խմիչք, ծխախոտ	101.3	101.4	102.0	101.4
Ոչ պարենային ապրանքներ	113.5	110.9	119.4	103.8
Ծառայություններ	110.1	110.4	134.0	110.4

Սպառողական գներ: 2009թ. նոյեմբերին ՀՀ սպառողական շուկայում շարունակվել է նախորդ երկու ամիսներին արձանագրված գնաճի միտումը և երեք ամիսների ընդհանուր գնաճը կազմել է 2.4%, ընդ որում նոյեմբերին հոկտեմբերի համեմատ սպառողական գներն աճել են 1.2%-ով: Դա հիմնականում պայմանավորվել է պարենային որոշ ապրանքատեսակների գների սեզոնային փոփոխություններով:


Պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գները 2009թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ աճել են 1.8%-ով, ոչ պարենային ապրանքներինը՝ 1.4%-ով, ծառայությունների սակագներինը՝ 0.1%-ով:

Սպառողական գների ինդեքսը 2009թ. նոյեմբերին 2008թ. դեկտեմբերի համեմատ կազմել է 104.5%, այդ թվում, պարենային ապրանքներինը (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) 98.9%, ոչ պարենային ապրանքներինը՝ 113.5%, ծառայությունների սակագներինը՝ 110.1%:

2009թ. հունվար-նոյեմբերին սպառողական գների միջին ամսական հավելաճը կազմել է 0.4%, ինչը 0.1 տոկոսային կետով ցածր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշից (0.5%):

Սպառողական գների հավելվածը 2000-2009թթ. նոյեմբերին

նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %



2009թ. նոյեմբերին 2008թ. նոյեմբերի համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 104.6%, այդ թվում պարենային ապրանքներինը (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)՝ 99.6%, ոչ պարենային ապրանքներինը՝ 110.9%, ծառայությունների սակագներինը՝ 110.4%, իսկ հունվար-նոյեմբերին 2008թ. հունվար-նոյեմբերի համեմատ՝ համապատասխանաբար 103.1%, 99.1, 103.8, 110.4%:

2009թ. նոյեմբերին 2005թ. համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 123.4%, այդ թվում, պարենային ապրանքներինը (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)՝ 118.7%, ոչ պարենային ապրանքներինը՝ 119.4%, ծառայությունների սակագներինը՝ 134.0%:

Հանրապետության դիտարկվող քաղաքներում 2009թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ արձանագրվել է սպառողական գների 0.8-1.5% գնաճ, ընդ որում, գնաճի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Եղեգնաձորում: Մայրաքաղաքում սպառողական գներն աճել են 1.2%-ով:

Պարենային ապրանքների գներ: 2009թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ հանրապետությունում արձանագրվել է պարենային ապրանքների 2.0% գնաճ, ինչի վրա իր անմիջական ազդեցությունն է թողել շաքարավազի, կենդանական և բուսական յուղերի, բանջարեղենի, ձկնամթերքի, մրգի 2.0-13.5% գնաճը: Դիտարկվող պարենային 13 ապրանքախմբերից 10-ում 2009թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ արձանագրվել է 0.1-13.5% գնաճ, 2-ում 0.7-0.1% գնանկում, իսկ 1-ում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը:

Մրգի ապրանքախմբում 2009թ. նոյեմբերին 2008թ. դեկտեմբերի համեմատ արձանագրվել է 4.8% գնանկում, իսկ 2009թ. հոկտեմբերի համեմատ՝ 13.5% գնաճ: Վերջինս հիմնականում պայմանավորվել է սեխի (1.7 անգամ) ձմերուկի (2.6 անգամ), դեղձի (2.5 անգամ), խաղողի 23.9% գնաճով: 2009թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ հանրապետությունում գնաճ է արձանագրվել նաև խնձորի 7.8%, տանձի 8.5%, նարնջի 3.1% գծով, իսկ արքայանարնջի, մանդարինի, նռան, կիտրոնի, ադամաթզի գները նշված ժամանակահատվածում նվազել են 31.5-0.4%-ով: Հանրապետության դիտարկված 10 քաղաքներում 2009թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ մրգի գներն աճել են 1.1-18.6%-ով, իսկ ք. Գյումրիում արձանագրվել է 1.3% գնանկում: Մայրաքաղաքում մրգի գներն աճել են 18.6%-ով:

2009թ. նոյեմբերին 2008թ. դեկտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է ձկնամթերքի 26.7%, իսկ 2009թ. հոկտեմբերի համեմատ՝ 12.5% գնաճ:

Բանջարեղենի և կարտոֆիլի ապրանքախմբում 2009թ. նոյեմբերին 2008թ. դեկտեմբերի համեմատ արձանագրվել է 15.9% գնանկում, իսկ 2009թ. հոկտեմբերի համեմատ՝ 9.0% գնաճ: Վերջինս հիմնականում պայմանավորվել է սխտորի 30.1%, սմբուկի 33.8%, գլուխ սոխի 34.9%, կանաչ լոբու 35.7%, վարունգի 54.1%, լոլիկի 57.5%, կանաչ պղպեղի 61.7%, ծաղկակաղամբի 89.4% գնաճով: 2009թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է ճակնդեղի 2.2%, խառը կանաչեղենի 2.3%, կանաչ սոխի 2.5% գնաճ և կարտոֆիլի 5.2% գազարի 2.8%, կաղամբի 2.3% գնանկում: Հանրապետության դիտարկված քաղաքներում բանջարեղենի և կարտոֆիլի գներն աճել են 3.0-16.5%-ով, ընդ որում, գնաճի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Թալիում: Մայրաքաղաքում բանջարեղենի և կարտոֆիլի գների ընդհանուր մակարդակը նախորդ ամսվա համեմատ աճել է 8.4%-ով:

Կենդանական և բուսական յուղերի ապրանքախմբում 2009թ. նոյեմբերին 2008թ. դեկտեմբերի համեմատ արձանագրվել է 4.2% գնանկում, իսկ 2009թ. հոկտեմբերի համեմատ՝ 2.8% գնաճ: Վերջինս հիմնականում պայման-

նավորվել է կարագի 6.4% գնաճով: Մարգարինի, արևածաղկի բուսական յուղի, այլ յուղերի (հալած յուղի) գները 2009թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ աճել են 1.1-1.3%-ով: Հանրապետության դիտարկված քաղաքներում կենդանական և բուսական յուղերի գներն աճել են 2.1-7.4%-ով, այդ թվում, գնաճի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Եղեգնաձորում: Մայրաքաղաքում արձանագրվել է կենդանական և բուսական յուղերի 2.1% գնաճ:

2009թ. նոյեմբերին 2008թ. դեկտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է շաքարավազի 33.6%, իսկ 2009թ. հոկտեմբերի համեմատ՝ 2.0% գնաճ: Հանրապետության դիտարկված 10 քաղաքներում 2009թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ շաքարավազի գինն աճել է 1.1-7.1%-ով, ընդ որում, գնաճի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Մարտունիում: Մայրաքաղաքում շաքարավազի գինն աճել է 1.7%-ով, իսկ ք. Գյումրում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը:

Մսամթերքի ապրանքախմբում 2009թ. նոյեմբերին 2008թ. դեկտեմբերի համեմատ գրանցվել է 2.1%, իսկ 2009թ. հոկտեմբերի համեմատ՝ 0.7% գնաճ: Վերջինս հիմնականում պայմանավորվել է ոչխարի մսի 16.4% թանկացմամբ: 2009թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ հանրապետությունում արձանագրվել է տավարի մսի 0.5% գնաճ և խոզի մսի 0.5% գնանկում: Հանրապետության դիտարկված քաղաքներում 2009թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ արձանագրվել է մսամթերքի 0.2-5.0% գնաճ, այդ թվում, գնաճի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Եղեգնաձորում: Մայրաքաղաքում մսամթերքի գներն աճել են 0.6%-ով:

2009թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ հանրապետությունում արձանագրվել է ոչ ոգելից խմիչքի, կաթնամթերքի, սուրճի, թեյի, կակաոյի, հրուշակեղենի 0.1-0.6% գնաճ: Չվի և այլ մթերքի գները նշված ժամանակահատվածում նվազել են համապատասխանաբար 0.7% և 0.1%-ով, իսկ հացամթերքի, ոգելից խմիչքի և ծխախոտի գների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ:

Որոշ կարևորագույն պարենային ապրանքատեսակների միջին հանրապետական մանրածախ գները և գների փոփոխությունները բերված են հավելված 1-ում:

Ոչ պարենային ապրանքների գներ: 2009թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ ոչ պարենային ապրանքների շուկայում գրանցվել է 1.4% գնաճ, ինչի վրա իր անմիջական ազդեցությունն է թողել բենզինի և դիզելային վառելիքի՝ համապատասխանաբար 4.5% և 6.5% գնաճը: 2009թ. նոյեմբերին 2008թ. նոյեմբերի համեմատ արձանագրվել է բենզինի 9.7% գնաճ և դիզելային վառելիքի 5.7% գնանկում, իսկ 2008թ. դեկտեմբերի համեմատ բենզինի և դիզելային վառելիքի գներն աճել են համապատասխանաբար 28.0% և 11.6%-ով:

2009թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ հանրապետությունում արձանագրվել է գրենական պիտույքների 0.1%, անձնապիտո ապրանքների 0.1% խոհանոցային սպասքի 0.2%, լվացող միջոցների 0.2%, այգեգործական ապրանքների 0.2%, տեքստիլեղենի 0.3%, գեղահարդարման ապրանքների 0.3%, գորգեղենի 0.4%, կոշիկեղենի 0.5%, մշակույթի ապրանքների 0.5%, հագուստի և գործվածքի 0.9%, վառելիքի 2.0%, դեղամիջոցների 2.1%, ոսկերչական ապրանքների 3.0% գնաճ: Դրան զուգընթաց, շինանյութերի և կենցաղային էլեկտրաապրանքների գները նվազել են 0.1%-ով, իսկ կահույքի գների մակարդակը նախորդ ամսվա նկատմամբ մնացել է անփոփոխ:


Հանրապետության դիտարկված քաղաքներում 2009թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ արձանագրվել է ոչ պարենային ապրանքների 0.9-4.5% գնաճ, ընդ որում, գնաճի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Արտաշատում: Մայրաքաղաքում ոչ պարենային ապրանքների գներն աճել են 1.2%-ով:

Ծառայությունների սակագներ: Բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում 2009թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ արձանագրվել է սակագների 0.1% հավելում: Տրանսպորտի և մշակույթի ոլորտի ծառայությունների սակագները նշված ժամանակահատվածում աճել են համապատասխանաբար 0.4% և 1.4%-ով, իսկ կենցաղային բնույթի, բնակարանային-կոմունալ, բուժսպասարկման, կապի, կրթության համակարգի, հանգստի կազմակերպման, հանրային սննդի, իրավական ու բանկային ծառայությունների սակագները նախորդ ամսվա համեմատ մնացել են անփոփոխ:

Հանրապետության դիտարկված 5 քաղաքներում 2009թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ արձանագրվել է ծառայությունների սակագների 0.1% հավելում, 3-ում՝ 0.4-0.1% նվազում, իսկ մյուս 3 քաղաքներում ծառայությունների սակագները նախորդ ամսվա համեմատ մնացել են անփոփոխ: Մայրաքաղաքում ծառայությունների սակագներն աճել են 0.1%-ով:


Ըստ գործող մեթոդաբանության, ՀՀ-ում գների դիտարկումը կատարվել է 2009թ. հոկտեմբերի 30-ին, նոյեմբերի 10-ին և 20-ին կամ մոտակա օրերին Երևան քաղաքում և հանրապետության մարզերի 11 բնակավայրերում 470 անվանում ապրանք-ծառայությունների գծով:

ՀՀ սպառողական շուկայում պարենային (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ), ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների փոփոխությունները 2009թ. հունվար-նոյեմբերին
Նախորդ ամսվա նկատմամբ, %



Արտարժույթի շուկա: 2009թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ հանրապետության սպառողական և արժույթին շուկաներում արձանագրվել է գների և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի (նոյեմբերի 1-27-ի դրությամբ) համապատասխանաբար 1.2% և 0.4% հավելաճ (ԱՄՆ դոլարն արժեվորվել է): 2009թ. նոյեմբերին 2008թ. դեկտեմբերի համեմատ սպառողական գների և հաշվարկային փոխարժեքի հավելաճը կազմել է համապատասխանաբար 4.5% և 25.8%: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում սպառողական գների և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի հավելաճը կազմել է համապատասխանաբար 5.1% և 0.4%: 2009թ. հոկտեմբերին ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 387.20 դրամ, ինչը 26.9%-ով գերազանցել է 2008թ. նոյեմբերի համապատասխան ցուցանիշը (305.21 դրամ):

ՀՀ սպառողական գների ինդեքսի, ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքների փոփոխությունները 2008-2009թթ. հունվար-նոյեմբերին
Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %



Որոշ պարենային ապրանքատեսակների միջին հանրապետական մանրածախ գները 2008-2009թթ.

(դրամ, կգ-ի համար)

	2008թ.	2009թ.												
	նոյեմբեր	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	օգոստոսի 31-ի դրությամբ	սեպտեմբերի 10-ի դրությամբ	սեպտեմբերի 22-ի դրությամբ	սեպտեմբերի 30-ի դրությամբ	հոկտեմբերի 9-ի դրությամբ	հոկտեմբերի 20-ի դրությամբ	հոկտեմբերի 30-ի դրությամբ	նոյեմբերի 10-ի դրությամբ	նոյեմբերի 20-ի դրությամբ
Բրինձ	572	621	617	619	621	622	610	620	619	619	619	626	626	611
Հաց բարձր տեսակի	406	374	374	374	374	374	374	374	374	374	374	374	374	375
Այլուր բարձր տեսակի	324	285	286	287	287	286	285	286	286	287	287	285	287	287
Այլուր առաջին տեսակի	219	192	192	194	194	191	191	194	194	194	194	191	194	194
Կարագ	2437	2245	2236	2284	2428	2239	2232	2237	2265	2293	2293	2306	2475	2512
Բուսական յուղ արևածաղկի, լիտր	925	617	625	640	648	618	628	631	633	641	646	656	633	657
Ձու , տասնյակ	542	466	483	483	480	483	482	484	484	487	478	473	483	483
Շաքարավազ	246	285	307	322	328	305	308	310	322	322	322	327	328	329
Կարտոֆիլ	140	110	124	124	117	121	127	125	127	123	121	121	118	112
Կաղամբ	124	80	95	122	119	87	93	103	112	130	125	122	116	113

Որոշ պարենային ապրանքատեսակների գների փոփոխությունները 2008-2009թթ.

(%)

	2008թ.	2009թ.												
	նոյեմբեր	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	հոկտեմբերի 30-ը			նոյեմբերի 10-ը			նոյեմբերի 20-ը		
		<i>նախորդ ամսվա նկատմամբ</i>				սեպտեմբերի 30-ի համեմատ	հոկտեմբերի 20-ի համեմատ	2008թ. հոկտեմբերի 30-ի համեմատ	հոկտեմբերի 9-ի համեմատ	հոկտեմբերի 30-ի համեմատ	2008թ. նոյեմբերի 10-ի համեմատ	հոկտեմբերի 20-ի համեմատ	նոյեմբերի 10-ի համեմատ	2008թ. նոյեմբերի 20-ի համեմատ
Բրինձ	99.2	99.4	99.4	100.3	100.3	101.1	101.1	109.1	101.1	100.0	109.3	98.7	97.6	107.0
Հաց բարձր տեսակի	94.4	99.5	100.0	100.0	100.1	100.0	100.0	87.6	100.0	100.0	93.9	100.2	100.2	95.3
Այլուր բարձր տեսակի	95.1	99.7	100.2	100.2	100.0	99.6	99.6	86.4	100.0	100.4	87.4	100.0	100.0	91.3
Այլուր առաջին տեսակի	91.3	99.9	100.1	100.9	100.0	98.4	98.4	81.0	100.0	101.6	90.4	100.0	100.0	96.4
Կարագ	98.7	97.9	99.6	102.2	106.4	101.8	100.6	94.7	108.0	107.3	101.7	109.5	101.5	102.8
Բուսական յուղ արևածաղկի, լիտր	99.3	98.6	101.4	102.4	101.3	103.7	101.5	70.8	98.7	96.5	68.5	101.8	103.9	71.0
Ձու , տասնյակ	102.5	99.6	103.6	100.1	99.3	97.6	99.0	87.8	99.1	102.1	88.9	101.2	100.1	88.6
Շաքարավազ	100.5	102.8	107.7	104.8	102.0	101.7	101.6	132.8	101.9	100.4	133.4	102.2	100.2	133.5
Կարտոֆիլ	106.6	102.0	113.0	99.3	94.8	94.8	99.9	85.5	95.8	97.8	85.2	93.1	95.3	80.7
Կաղամբ	107.1	106.0	119.0	129.2	97.7	108.9	98.2	97.3	89.0	94.6	94.2	91.2	98.1	91.4

Հավելված 2

Մյառողական գների ինդեքսը Եվրամիության, ԱՊՀ և աշխարհի մի շարք այլ երկրներում
2009թ. հունվար-հոկտեմբեր ամիսներին¹

(%)

	2009 թ.										2009թ. հոկտեմբերը 2008թ. դեկտեմ- բերի նկատմամբ
	հուն- վարը	փետր- վարը	մարտը	ապրիլը	մայիսը	հունիսը	հուլիսը	օգոս- տոսը	սեպտեմ- բերը	հոկտեմ- բերը	
	նախորդ ամսվա համեմատ										
Ավստրիա	99,4	100,5	100,2	100,2	100,1	99,9	99,6	100,4	100,2	100,1	100,6
Բելգիա	98,1	102,3	99,4	100,3	99,9	99,9	98,4	102,1	99,6	100,0	99,9
Բուլղարիա	100,4	100,4	99,7	100,5	100,0	100,1	99,9	100,1	99,8	100,2	101,1
Հունգարիա	100,7	100,8	100,5	100,9	101,5	100,0	101,4	99,5	99,8	99,8	105,1
Գերմանիա	99,4	100,7	99,8	100,1	99,9	100,4	99,9	100,3	99,5	100,1	100,1
Հունաստան	99,5	98,9	102,0	100,4	100,2	99,9	99,3	99,2	101,9	100,5	101,8
Դանիա	99,6	101,0	100,4	99,9	100,4	100,2	99,4	100,3	100,2	100,0	101,4
Իռլանդիա	99,2	100,2	100,1	100,1	99,6	100,0	99,2	100,2	99,6	99,8	98,0
Իսպանիա	98,7	100,0	100,2	101,0	100,0	100,5	99,2	100,4	99,8	100,7	100,3
Իտալիա	98,3	100,2	101,2	100,6	100,2	100,2	98,8	100,2	100,7	100,4	100,8
Կիպրոս	97,7	100,0	101,4	100,9	100,7	100,1	98,6	100,2	100,8	100,9	101,2
Լատվիա	102,1	101,1	100,1	99,6	99,6	99,5	99,4	99,0	99,7	99,7	99,8
Լիտվա	102,6	100,3	100,0	99,9	99,8	99,7	99,2	99,8	100,6	99,6	101,5
Լյուքսեմբուրգ	98,9	101,8	99,9	100,5	100,3	100,7	99,1	101,3	99,9	99,8	102,0
Մալթա	97,8	100,8	101,5	102,3	100,2	99,9	99,9	100,6	99,8	99,6	102,4
Նիդերլանդներ	100,0	101,0	101,2	100,3	100,1	99,6	98,4	100,2	100,5	100,3	101,6
Լեհաստան	100,4	100,8	100,8	100,6	100,6	100,2	100,3	99,6	100,0	100,2	103,6
Պորտուգալիա	99,1	100,0	100,8	100,4	99,8	100,2	99,6	99,8	99,9	100,0	99,5
Ռումինիա	101,2	100,8	100,5	100,3	100,0	100,2	99,9	99,8	100,4	100,4	103,7
Սլովակիա	100,3	100,0	99,7	99,9	100,1	100,0	99,9	99,8	99,9	100,2	99,8
Սլովենիա	99,7	100,6	100,8	100,2	100,6	100,5	99,2	100,1	99,9	100,1	101,8
Միացյալ Թագավորություն (Մեծ Բրիտանիա)	99,3	100,9	100,2	100,2	100,6	100,3	100,0	100,4	100,0
Ֆինլանդիա	100,3	100,7	100,4	100,2	99,9	100,4	99,3	100,4	100,3	99,5	101,5
Ֆրանսիա	99,6	100,4	100,2	100,1	100,1	100,1	99,5	100,6	99,8	100,1	100,6
Չեխիա	101,4	100,1	100,2	99,9	100,1	100,0	99,6	99,8	99,6	99,7	100,4
Շվեդիա	99,9	100,6	100,5	100,3	100,3	100,2	99,8	100,2	100,4	100,3	102,5
Էստոնիա	99,4	99,6	99,5	99,4	100,0	99,8	100,8	99,9	99,8	99,9	98,3
Ընդամենը Եվրամիության երկրներ (ԵՄ -27)	99,4	100,5	100,3	100,3	100,2	100,2	99,5	100,3	100,0	100,2	101,0
Հայաստան	101,2	98,2	101,4	103,2	101,6	99,7	97,3	99,6	100,7	100,5	103,2
Ռուսաստան	102,4	101,7	101,3	100,7	100,6	100,6	100,6	100,0	100,0	100,0	108,1
Բելառուս	104,1	101,2	100,6	100,4	100,3	100,4	100,4	99,8	100,3	100,4	108,3
Ուկրաինա	102,9	101,5	101,4	100,9	100,5	101,1	99,9	99,8	100,8	100,9	110,1
Ղազախստան	100,3	100,8	100,8	100,8	100,7	100,4	100,3	100,2	100,4	100,4	105,1
Վրաստան	101,4	98,7	99,6	100,5	101,2	100,0	96,6	100,0	102,8	102,2	103,0
Ղրղզստան	100,5	100,3	99,6	100,4	100,3	99,5	98,6	99,0	100,2	...	98,4
Մոլդովա	99,9	99,0	99,2	100,3	100,2	99,7	99,4	98,9	100,6	101,5	98,6
Տաջիկստան	100,4	100,3	100,5	99,9	100,9	100,8	100,3	100,9	100,4	100,2	...
Ադրբեջան	99,4	99,2	99,3	99,8	99,8	99,4	100,8	100,1	100,4
Կանադա	99,7	100,7	100,2	99,9	100,7	100,3	99,7	100,0	100,0	99,9	101,1
Նորվեգիա	99,6	101,0	100,1	100,4	100,3	100,6	99,4	99,7	101,0	99,7	101,9
Բրազիլիա	100,5	100,6	100,2	100,5	100,5	100,4	100,2	100,1	100,2	100,3	103,5
Կորեայի Հանրապետություն	100,1	100,7	100,7	100,3	100,0	99,9	100,4	100,4	100,1	99,7	102,3
ԱՄՆ	100,4	100,5	100,2	100,2	100,3	100,9	99,8	100,2	100,1	100,1	102,8
Թուրքիա	100,3	99,7	101,1	100,0	100,6	100,1	100,2	99,7	100,4	102,4	104,6
Ճապոնիա	99,4	99,7	100,3	100,1	99,8	99,8	99,7	100,3	100,0

.. - Տվյալները բացակայում են:

¹ Տեղեկատվությունը պատրաստվել է Եվրոստատի, ազգային վիճակագրական ծառայությունների կայք էջերում, ինչպես նաև ԱՄՆ-ի Տվյալների տարածման հատուկ ստանդարտների պահանջներին համապատասխան ԱՄՆ-ի կայք էջում գետեղված ցուցանիշների հիման վրա:

<<Մյառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2009թ. հունվար-դեկտեմբերին>> մամուլի հաղորդագրության հրապարակման ժամկետը, համաձայն <<2009 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի>>, նախատեսված է 2009թ. դեկտեմբերի 30-ին (տես՝ ծածկագիր 1000-401, Հավելված 3, էջ 62):